ConverseBank

Վիզա վիրտուալ հաշվի (քարտի) բացման ակցիա
Տեղեկատվական ամփոփագիր

Ակցիան գործում է 2020թ. հունվարի 13-ից մինչև մարտի 31-ը ներառյալ

Ակցիայի գործողության ընթացքում բացված Հաշիվների սպասարկման միանվագ վճար չի գանձվում:

Անվանում	**Visa Virtual Account**	
Տեսակ	Դեբետային	
Համակարգ	Visa	
Սահմանափակում	Կիրառվում է միայն առցանց գործարքներ կատարելու համար • քարտով կանխիկացում հնարավոր չէ իրականացնել • գործարքները հաստատվում են, եթե կատարվել են համացանցում, կամ հեռախոսի/էլ փոստի միջոցով ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով • Վիզա Վիրտուալ քարտով չի թույլատրվում կատարել այնպիսի վճարումներ, որոնց վերջնական հաստատման ժամանակ կարող է պահանջվել ֆիզիկական քարտի առկայություն	
Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի	
Գործողության ժամկետ	36 ամիս 24 ամիս (անանուն քարտերի դեպքում)	
Սպասարկման միանվագ վճար	**0 ՀՀ դրամ**	
Անկանխիկ գործարքներից միջնորդավճարներ	0 ՀՀ դրամ	
Անկանխիկ գործարքների օրական առավելագույն սահմանաչափ *Կարող է փոփոխվել հաճախորդի դիմումի համաձայն*	1,000,000 ՀՀ դրամ; 3,000 ԱՄՆ դոլար; 2,000 Եվրո; 100,000 ՌԴ ռուբլի	
Հավելյալ հաշվի տրամադրում **Նույն հաշվի ներքո բացված լրացուցիչ Վիզա վիրտուալ հաշիվ:**	500 ՀՀ դրամ	
Բանկի «Վճարային Պորտալ» համակարգով քարտից քարտ փոխանցում	**ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին**	0.5%[1]
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa և Mastercard քարտին	0.5%[1] + (1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)[2]
Բանկի դրամարկղերում, Ինտերնետ և Մոբայլ Բանկ համակարգերով Բանկի քարտապանների քարտից քարտ փոխանցում	**ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին**	0.5%[1]
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa և Mastercard քարտին	0.5%[1] + (1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)[2]
Քարտից քարտ (այլ եղանակով) փոխանցումներ[3]		0.5%[1]
Քարտային հաշվից կանխիկացում		3%
Վճարային սահմանաչափի գերազանցման դեպքում գերազանցող գումարի նկատմամբ կիրառվող տույժ		Գերազանցող գումարի 0.13%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար
Հետգանձման անհիմն հայտի ներկայացում[4]		5,000 ՀՀ դրամ
Վիրտուալ հաշվին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ կամ USSD հարցման պատասխան SMS հաղորդագրության ուղարկում (ներառյալ ԱԱՀ)		*ՀՀ բջջային օպերատոր*՝ 20 ՀՀ դրամ *Արտերկյա բջջային օպերատոր*՝ 40 ՀՀ դրամ
Վիրտուալ հաշվի բլոկավորում, ապաբլոկավորում		0 ՀՀ դրամ
Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետ	Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում. *Երևան քաղաքում գտնվող մասնաճյուղերում*՝ 5 աշխատանքային օր *Երևան քաղաքից դուրս գտնվող մասնաճյուղերում*՝ 10 աշխատանքային օր Քարտն ակտիվանում է 1 օրվա ընթացքում	

[1] Միջնորդավճարի գանձումը կկատարվի գործարքի հաշվեգրման ժամանակ:
[2] Միջնորդավճարը կգումարվի գործարքի գումարին և կգանձվի անմիջապես գործարքի ժամանակ:
[3] Հնարավոր է նաև սպասարկող բանկի կողմից կիրառվեն լրացուցիչ միջնորդավճարներ:
[4] Անհիմն է համարվում հաճախորդի կողմից Բանկին ներկայացված հայտը, որի մեջ նշված տեղեկություն/ներ/ը իրականությանը չի/են/ համապատասխանում:

Հավելյալ քարտ

Բանկը կարող է թողարկել մեկ կամ մի քանի հավելյալ վիրտուալ քարտ՝ քարտապանի կամ նրա կողմից նախապես նշված անձանց անունով՝ Բանկին տրամադրելով հավելյալ քարտապանների վերաբերյալ հավաստի տեղեկություններ:

- Հավելյալ քարտը կարող է օգտագործվել միայն այն անձի կողմից, որի անունով այն թողարկվել է:
- Հավելյալ քարտերով կատարվող բոլոր գործառնությունների/գործարքների գումարները գանձվում են հիմնական քարտային հաշվից:
- Հիմնական քարտի փակման դեպքում փակվում են նաև հավելյալ քարտերը:
- Հավելյալ քարտապանի կողմից կատարված գործառնությունների/գործարքների, այդ թվում՝ գերածախսի համար պատասխանատվությունը կրում է հաշվետեր քարտապանը:

Քարտի տրամադրման և օգտագործման կանոններ

Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները ներառում են Քարտի օգտագործման, պահպանման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ և այլ կարևոր դրույթներ:

Կանոնները հասանելի են հետևյալ հղումով՝ https://conversebank.am/hy/cards/

Անվտանգության կանոններ

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ խորհուրդ է տրվում.

- նախքան քարտով ինտերնետային միջավայրում գործառնություն/գործարք իրականացնելը մանրամասն ծանոթանալ տվյալ ինտերնետային կայքից գնումների կատարման, առաքման, գործառնության/գործարքի չեղյալացման, ապրանքների վերադարձման պայմաններին, ինտերնետային կայքում կոնտակտային տվյալների առկայությանը,
- ինտերնետային միջավայրում քարտով գործառնություն/գործարք իրականացնելիս պետք է օգտվել ճանաչված և հուսալի կայքերից, ինչպիսիք են Secure Sockets Layer (SSL) սերտիֆիկատ, Verified by Visa անվտանգության համակարգ, Mastercard SecureCode և այլ անվտանգության համակարգեր ունեցող կայքերից,

Բանկը հնարավորություն է ընձեռում քարտապանին ստանալ քարտին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS (կարճ) հաղորդագրություններ՝ այդպիսով հնարավորինս կանխելով քարտի չլիազորված օգտագործումը: Խորհուրդ է տրվում վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես հավաստիանալ, որ գործառնությունը/գործարքը կատարվել է Ձեր կամ Ձեր կողմից լիազորված անձի գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ:

Բանկի քարտապանների համար ներդրված է էլեկտրոնային վճարումների առցանց ընդունման անվտանգության 3Դ Սեքյուր (3D Secure) համակարգը՝ Բանկի կողմից տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառ, որը քարտապանը ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով կամ էլեկտրոնային փոստով:

Քարտի չլիազորված օգտագործման վտանգի դեպքում

Քարտի չլիազորված օգտագործման կամ նման օգտագործման վտանգի դեպքում արգելափակելու համար հարկավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ հետևյալ եղանակներից ցանկացածով.

1. Զանգահարելով Քարտի վրա նշված հեռախոսահամարով:
2. Զանգահարելով Բանկ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.
   - ✓ ժամը 9:00-22:00՝ **(+37410) 511-210, 511-211,**
   - ✓ շուրջօրյա՝ **(+37410) 545-514:**

   Բանավոր դիմումի ստացումից և քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:
3. Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝
   զանգահարելով «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ **(+37410) 592-222** հեռախոսահամարով:
4. Ուղարկելով համապատասխան գրավոր հաղորդագրություն card@conversebank.am էլ. հասցեով կամ **(+37410) 511-212** ֆաքսով:
5. Ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Մինչ Բանկին ծանուցելու պահը քարտով կատարված գործառնությունների/գործարքների համար Բանկը պատասխանատվություն չի կրում և կարող է քարտապանից պահանջել միջազգային վճարահաշվարկային համակարգերին Բանկի կողմից վճարված գումարները:

Գործարքի բողոքարկում

Քաղվածքում գործարքի հաշվեգրման պահից 1 տարվա ընթացքում (վճարահաշվարկային համակարգերի կանոններով կարգավորվող դեպքերում՝ 60 օր) քարտապանը կարող է Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ՝ հասանելի է Բանկում, ինչպես նաև հետևյալ հղումով՝ https://conversebank.am/hy/all-forms/:

Խորհուրդ է տրվում որևէ անհամապատասխանության կամ չարտոնված գործարք նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին:

Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը կարող են չդիտարկվել Բանկի կողմից: Գործարքի բողոքարկման համար հարկավոր է պահպանել գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը:

Բողոքարկման հայտին ի պատասխան 90 օրյա ժամկետում Բանկը կամ կվերականգի բողոքարկվող գործարքի գումարը քարտային հաշվին կամ քարտապանին կտրամադրի գրավոր պատասխան՝ գումարի վերադարձման անհնարինությունը հիմնավորելով: Առանձին դեպքերում, քարտապանին պատշաճ ծանուցելով, հնարավոր է պատասխան գրությունը տրամադրվի կամ գումարը վերականգնվի սահմանված 90 օրյա ժամկետից ուշ՝ ելնելով վճարահաշվարկային համակարգերի կանոններից կամ այլ չնախատեսված հանգամանքներից:

Գումարի վերականգնման անհնարինության դեպքում քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

Այն դեպքում, երբ զեղծարարական գործարքի իրականացման փաստը հայտնաբերվել է բանկի աշխատակցի կողմից, ինչպես նաև վճարահաշվարկային համկարգերից քարտի տվյալների հնարավոր արտահոսքի մասին հաշվետվություն ստանալու դեպքում, քարտի վերաթողարկումը կատարվում է անվճար:

Գործառնությունների/գործարքների կատարման ժամկետներ

1. Գործառնությունը/գործարքը համարվում է ելքագրված քարտային հաշվից գործառնության/գործարքի հաշվառման օրը: Գործառնությունը/գործարքը՝ կախված առևտրի/սպասարկման կետի տեսակից, կարող է հաշվառվել մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում: Գործառնության/գործարքի գումարը քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ քարտային հաշվում հաշվառվում է, ինչպես նաև քարտային հաշվի քաղվածքում արտացոլվում է, որպես կանոն, հետևյալ ժամկետներում՝
   - ԱրՔա համակարգում կատարված գործառնությունների/գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը,
   - ԱրՔա համակարգից դուրս կատարված գործառնությունների/գործարքների դեպքում 2-3 աշխատանքային օր հետո:
2. Քարտային հաշվից և այլ բանկերից փոխանցումները քարտին հասանելի են դառնում, որպես կանոն, հետևյալ ժամկետներում.
   - մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 12:30, եթե գումարը մուտքագրվել է կամ փոխանցումը ստացվել է Բանկում մինչև նույն աշխատանքային օրվա 11:00,
   - մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30, եթե գումարը մուտքագրվել է կամ փոխանցումը ստացվել է Բանկում նույն աշխատանքային օրվա 11:00-15:00,
   - մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 18:30, եթե գումարը մուտքագրվել է կամ փոխանցումը ստացվել է Բանկում նույն աշխատանքային օրվա 15:00-17:00:
3. Բանկի դրամարկղում քարտային հաշվին և տերմինալներով քարտին կանխիկ մուտքագրված գումարը, ինչպես նաև Բանկի Ինտերնետ և Մոբայլ բանկ համակարգերի միջոցով բանկային հաշվից քարտին փոխանցումը (բացառությամբ քարտային հաշվից փոխանցումների) հասանելի է դառնում որպես կանոն մինչև 5 րոպեի ընթացքում (ԱրՔա պրոցեսինգային կենտրոնում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):
4. Յուրաքանչյուր ամսվա առաջին 3 աշխատանքային օրը գործարքների գումարները կարող են քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:
5. Քարտային հաշվին միջոցները կարող են մուտքագրվել նաև վճարահաշվարկային համակարգերի կողմից նախատեսված տարբերակներով (քարտից քարտ, էլեկտրոնային դրամապանակից քարտին փոխանցում, բանկոմատի միջոցով գումարի մուտքագրում քարտին և այլն), որոնց դեպքում գումարը քարտին կարող է ակտիվանալ անմիջապես կամ վճարահաշվարկային համակարգերի կողմից տվյալ գումարի մուտքագրման եղանակի համար նախատեսված ժամանակահատվածում: Քարտային հաշվին գումարների մուտքագրման դեպքում գումարը համարվում է մուտքագրված տվյալ գործառնության/գործարքի հաշվեգրման օրը: Որպես կանոն նմանատիպ գործարքները հաշվառվում են 1-3 աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու համար: Մասնավորապես՝ ոչ Բանկի մեղքով տեխնիկական կամ ծրագրային խնդիրների պատճառով:

Քարտի գծով կարող է ձևավորվել գերածախս կախված գործարքների որոշ տեսակների առանձնահատկություններից, սպասարկող բանկի կողմից գործարքի ներկայացման ժամկետներից, ծրագրային խնդիրներից, սպասարկման կետի կողմից կատարված հետվճարներից/հետվերադարձերից, Բանկի կողմից սահմանված միջնորդավճարներից, արտարժույթի փոխանակման գործարքներից և այլն:

Քարտի բլոկավորում և հաշվի սառեցում

Ելնելով քարտապանի շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ քարտային հաշվով 6 ամիս և ավելի շրջանառություն չլինելու դեպքում Բանկը կարող է միակողմանիորեն սառեցնել քարտային հաշիվը և բլոկավորել քարտը՝ առանց այդ մասին քարտապանին լրացուցիչ տեղեկացնելու, ինչը, սակայն, չի սահմանափակում Բանկի իրավունքը՝ իր հանդեպ քարտապանի ունեցած վճարային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով համապատասխան գումարներ գանձել քարտային հաշվից:

Բանկն իր նախաձեռնությամբ կարող է բլոկավորել քարտը և սառեցնել քարտային հաշիվը, հետևյալ դեպքերում.

1. քարտապանը Բանկի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ,
2. քարտապանը ժամանակին չի կատարել սակագներով սահմանված վճարումները,
3. պետական իրավասու մարմիններից ստացվել է բլոկավորման համապատասխան գրություն,
4. Բանկն իր կողմից կատարվող մոնիթորինգի ժամանակ հայտնաբերել է կասկածելի զեղծարարական, անօրինական, կամ դրանից բխող գործառնություններ/գործարքներ,

Բանկը կարող է ապաբլոկավորել քարտը և ապասառեցնել քարտային հաշիվը, եթե.

1. քարտապանը մարել է ժամկետանց պարտավորությունները,
2. քարտապանը վճարել է սակագներով սահմանված վճարումները,
3. պետական իրավասու մարմիններից ստացվել է ապաբլոկավորման համապատասխան գրություն,
4. Բանկն իր կողմից կատարվող մոնիթորինգի ժամանակ հայտնաբերած կասկածելի զեղծարարական գործառնությունների/գործարքների գծով ստացել է բանավոր կամ գրավոր հավաստում դրանց ոչ զեղծարարական լինելու վերաբերյալ:

Բանկն իրավասու է արգելափակել քարտը, եթե քարտի տվյալները (քարտի վերջնաժամկետը, CVV ծածկագիրը) ինտերնետ միջավայրում մի քանի անգամ սխալ է մուտքագրել:

Քարտի վերաթողարկում

1. Քարտերը ենթակա են վերաթողարկման տվյալները 3-րդ անձանց հայտնի դառնալու դեպքում կամ գործողության ժամկետի ավարտին՝ փոխվում է քարտի համարը, CVV ծածկագիրը և գործողության ժամկետը (սահմանված քարտի ժամկետի չափով):
2. Բանկը Ժամկետի ավարտին նախորդող վերջին 15 օրերի ընթացքում, առանց քարտապանի լրացուցիչ համաձայնության կարող է վերաթողարկել քարտը:
3. Բանկի կողմից ավտոմատ վերաթողարկվում են հաշվին՝ տվյալ քարտատեսակի համար սահմանված սպասարկման վճարին համարժեք գումարի չափով դրական մնացորդ ունեցող քարտերը, բացառությամբ այն քարտերի, որոնց մասով ստացվել է չվերաթողարկման մասին գրություն:
4. Քարտերի վերաթողարկման գործընթացն իրականացվում է և ավարտվում է հաշվետու ամսվա ընթացքում:

Հավելյալ և ոչ ռեզիդենտ հաճախորդներին տրամադրված քարտերն ավտոմատ չեն վերաթողարկվում:

Քարտի/քարտային հաշվի փակում

Քարտը ենթակա է փակման հետևյալ դեպքերում.

- քարտի ժամկետի ավարտին չվերաթողարկման դեպքում,
- հաճախորդի դիմումի հիման վրա:

Պայմանագրի լուծման վերաբերյալ քարտապանի գրավոր դիմումը ստանալու պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Բանկը կդադարեցնի քարտի սպասարկումը:

Քարտի գծով պարտավորությունների առկայության դեպքում քարտի փակման դիմումը կարող է ընդունել միայն այդ պարտավորությունների մարման դեպքում:

Դրական մնացորդ ունենալու դեպքում հաճախորդն այն կարող է ստանալ դիմումը ներկայացնելուց հետո 45 օր անց. նշված ժամկետում հնարավոր պարտավորությունների առաջացման դեպքում հաճախորդը պարտավոր է մարել առաջացած գերածախսը 5 բանկային օրվա ընթացքում:

Քարտի սպասարկման դադարեցման դեպքում քարտապանը շարունակում է պարտավորություն և պատասխանատվություն կրել այն գործառնությունների/գործարքների վճարման համար «որոնք կատարվել են նախքան քարտի սպասարկման դադարեցումը:

Փակված քարտի հաշվի մնացորդը երեք ամսվա ընթացքում չօգտագործելու դեպքում գանձվում է 1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր եռամսյակի համար, եթե մնացորդը փոքր է 1,000 ՀՀ դրամից/համարժեք արտարժույթից, ապա գանձվում է ամբողջ մնացորդային գումարը և հաշիվը փակվում է:

Քարտի փակմանը հաջորդող երկրորդ տարվանից սկսած հաշվից ամսական գանձվում է 15,000 ՀՀ դրամ: Սույն սակագինը չի կիրառվում, եթե հաճախորդի որևէ հաշվով կատարվել են գործարքներ կամ վերջինս Բանկում ունի գործող ավանդ կամ որևէ ֆինանսավորում, ինչպես նաև չի տարածվում օրենքով սահմանված կարգով արգելանքի տակ գտնվող բանկային հաշիվների վրա: Եթե երկու տարի և ավելի գործառնություն չիրականացված հաշվի մնացորդը փոքր է 15,000 ՀՀ դրամից/համարժեք արտարժույթից, գանձվում է ամբողջ մնացորդային գումարը և հաշիվը փակվում է:

Պատասխանատվություն

Բանկը պատասխանատվություն չի կրում.

1. Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով 3D Secure անվտանգության գաղտնաբառ չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում:
2. Որևէ ինտերնետային կայքում քարտի չսպասարկման կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար:
3. 3D Secure հավաստագրում ստացած, ինչպես նաև 3D Secure անվտանգության համակարգ ապահովող կայքերում կատարված, սակայն 3D Secure հավաստագրում չստացած առցանց գործառնությունների/գործարքների հետևանքով քարտապանին պատճառված վնասների համար:

Բանկի հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Քաղվածքների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրում (ներառյալ ԱԱՀ)

- **Քաղվածքի տրամադրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ (մեկ անգամ)՝** 0,
- **Հավելյալ քաղվածքի տրամադրում**[1] **ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությունից բացի**
  - մինչև 3 տարի վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ
  - 3 տարի և ավելի վաղեմության (Բանկում պահպանված լինելու դեպքում)՝ 3,000 ՀՀ դրամ
- **Տարբեր հաստատություններ ներկայացնելու համար տեղեկանք**[1]
  - Մեկ ամսվա ընթացքում բացված հաշիվների դեպքում[2]՝ 5,000 ՀՀ դրամ
  - Ավելի վաղ բացված հաշիվների դեպքում՝ 3,000 ՀՀ դրամ
- **Հաշվի/հաշիվների մնացորդի և/կամ շրջանառության մասին տեղեկանք՝ Բանկի ինտերնետային կայքի միջոցով ներկայացված հայտի հիման վրա՝** 3,000 ՀՀ դրամ
- **Տեղեկանքներ/գրություններ կատարված գործարքների վերաբերյալ**
  - Մինչև մեկ ամսվա վաղեմություն ունեցող գործարքների համար՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ ամսից ավելի վաղեմություն ունեցող գործարքների համար՝ 5,000 ՀՀ դրամ
- **Գործարքի կատարման հիմքեր, և այլ փաստաթղթերի պատճեններ (յուրաքանչյուր փաստաթղթի համար)**
  - Մինչև 1 ամիս վաղեմություն ունեցող՝ 1,800 ՀՀ դրամ
  - Մինչև 1 տարի վաղեմություն ունեցող՝ 3,000 ՀՀ դրամ
  - Մեկ տարուց ավելի վաղեմություն ունեցող՝ 12,000 ՀՀ դրամ

Այլ ծառայությունների սակագներ (ներառյալ ԱԱՀ)

- **Քաղվածքների կամ այլ փաստաթղթերի փոստային առաքում**
  - ✓ *Ներհանրապետական և ԱՀ՝ 0*
  - ✓ *Միջազգային*
    - Օրենքով և պայմանագրով սահմանված լինելու դեպքում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին
    - Այլ դեպքերում՝ առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 1,500 ՀՀ դրամ
- **Քաղվածքների կամ այլ փաստաթղթերի՝ Պատվիրակված առաքման փոստային ծառայության միջոցով առաքում**
  - Ներհանրապետական և ԱՀ՝ 3,000 ՀՀ դրամ
  - Միջազգային՝ Առաքման ծառայությունը մատուցող կազմակերպության կողմից սահմանված սակագին + 3,000 ՀՀ դրամ

[1]Նույն հաճախորդին տեղեկանքի և քաղվածքի միաժամանակյա տրամադրման և տեղեկանքի դիմաց գանձում նախատեսված լինելու դեպքում գանձումը կատարվում է միայն տեղեկանքի դիմաց:
[2]Մեկից ավելի գործող հաշիվ ունենալու պարագայում դիտարկվում է ավելի վաղ բացված հաշվի բացման ամսաթիվը՝ անկախ տեղեկանքում ներառվելու փաստից:

Հեռահար կապի միջոցներ

Բանկի ծառայությունները մատուցվում են նաև հեռահար կապի միջոցներով, որոնց պայմանները ներկայացված են հետևյալ հղումներով՝

Converse Առցանց Բանկ / Converse Mobile - https://conversebank.am/hy/internet-banking/
Իմ Կոնվերս - https://conversebank.am/hy/my-converse/
SMS – Converse / USSD - https://conversebank.am/hy/sms-converse-ussd/

Բանկոմատներ և կանխիկացման կետեր

Բանկի բանկոմատների ցանկ՝ https://conversebank.am/hy/atms/
Բանկի մասնաճյուղերի ցանկ՝ https://conversebank.am/hy/branches/

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1	Դիմում – հայտ
2	Անձը հաստատող փաստաթուղթ, Հանրային ծառայությունների համարանիշ կամ տեղեկանք ՀԾՀ չստանալու վերաբերյալ (չի պահանջվում, եթե ներկայացվում է նույնականացման քարտ)
Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր	

Ուշադրություն
ՀՀ առևտրային բանկերից ԱրՔա համակարգի անդամ չի հանդիսանում ՎՏԲ-Հայաստան բանկը:
Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով ԱրՔա համակարգից դուրս գործող առևտրի և սպասարկման կետերում կատարված գործարքների դեպքում արտարժույթի փոխանակման ժամանակ գործում է Բանկի կողմից սահմանված 1% միջնորդավճար: Բացառություն են կազմում ԱՄՆ դոլարով և Եվրոյով կատարված գործարքները:
Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Հավաստագրման ժամանակ կիրառվում են ArCa/Visa/Mastercard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործառնության/գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվան նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Բացառություն են կազմում Visa վճարահաշվարկային համակարգի քարտերով Եվրոյով կատարված գործառնությունները/գործարքները, որոնց հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվան նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված Եվրոյի փոխարժեքը: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժութային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

Բանկը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պարտաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ կառավարության հետ կնքած համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, Բանկը կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Բանկն իրավասու է փոփոխել և լրացնել մատուցվող ծառայությունների սակագները՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային էջում (www.conversebank.am) հաղորդագրություն հրապարակելով, Բանկի տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, փոստով ծանուցումն առաքելու միջոցով և հաճախորդի կողմից ընտրված Բանկի կողմից առաջարկվող այլ եղանակներով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պատշաճ իրազեկում:

Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Բանկը պայմանագիր կնքելիս Ձեզ կտրամադրի «Քարտերի տրամադրման և օգտագործման կանոնները», որում ներկայացված են քարտի անվտանգ օգտագործման նվազագույն պայմանները:

Քարտի տրամադրման վայրը

Քարտը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:

Ձեր ֆինանսական տեղեկատուն

«Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am, ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է»:

Ծանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացի 15 («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն)
Հեռախոս՝ +374 10 583514

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և Բանկի միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք՝ փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,
«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
Էլ. փոստ՝ info@fsm.am**,**
Հեռախոս՝ (+37460) 70-11-11,
Ֆաքս՝ (+37410) 58-24-21

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի https://www.conversebank.am ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber՝ +374 95 511 211
- Skype՝ conversebank-callcenter